

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչապար ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊԶԲ-25/60 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Քլորավիր	Կեմ Պլանտ	<<Քլորավիր հաբեր, 2,7 գ>>, 1 կգ-անոց տուփում 370 հատ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամ-բացասական և գրամ դրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիաները՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, բացիլների սպորները), վիրուսների (Կոքսակի, ECHO, պոլիոմիելիտի, ընդերային ու արտաընդերային հեպատիտի վիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, ՄԻԱՎ, կորոնավիրուսների, ներհիվանդանոցային վարակների (այդ թվում հարուցիչների հատկապես կայուն շտամների, ինչպիսիք են MRSA, MERS-CoV, SARS-CoV և SARS-CoV-2, կապտաթարախային ցուպիկ և այլն), անաերոբ վարակների հարուցիչների, գրիպի, այդ թվում A տեսակի, ներառյալ՝ A H5N1, A H1N1, ադենովիրուսների և սուր շնչառական վարակների այլ հարուցիչների, բոլոր տեսակի հերպեսի, ցիտոմեգալովիրուսի), կանդիդա (Candida), դերմատոֆիտների, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի, բորբոսասնկերի, հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա), սիբիրյան խոցի (այդ

		թվում սպորային ձևերի) հարուցիչների, բակտերիաների սպորների նկատմամբ: Միջոցն օժտված է ախտահանիչ ակտիվությամբ մակաբուծային հիվանդությունների (նախակենդանիների ցիստեր, օոցիստեր, հելմինթների ձվիկներ և թրթուրներ, այդ թվում աղիքային հելմինթոզների, սրատուլոսների) հարուցիչների նկատմամբ: Միջոցն իրենից ներկայացնում է քլորի հոտով, սպիտակ, 3,20-3,50գ, 2,43-2,97գ, 1,55-1,80գ զանգվածով հաբեր: Որպես ազդող նյութ, միջոցի բաղադրության մեջ մտնում է դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ՝ 84,0-88,0%, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ և մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ՝ սուլֆոնոլ): Ակտիվ քլորի զանգվածը՝ 40-49 %, ակտիվ քլորի զանգվածը 1 հաբի մեջ՝ 1,32-1,62 գ, 1,08-1,32 գ, 0,68-0,83 գ, տրոհման ժամանակը՝ 10 րոպեից ոչ ավել: Օժտված է լվացող հատկությամբ: Հաբը կշռում է 2,7գ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր: Հաբերն ինքնալուծվող են: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 30 օր՝ մեթոդական ցուցումների համաձայն պահպանման դեպքում: Հաբերի պիտանելիության ժամկետը փակ տարայում՝ 5 տարի: Նախատեսված է մակերեսների, կոշտ գույքի, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդների խնամքի պարագաների, չժանգոտվող մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակե բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման համար, ունի հակաՎիրուսային, հակասնկային, հակաբակտերիալ, հակատուբերկուլյոզային ազդեցություն: Ունի որակի հավաստագիր, ինչպես նաև ՀՀ ԱՆ կողմից հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 02 սեպտեմբեր 2024թ., թիվ 4752-Ա, որով հաստատվում են ներկայացված ցուցանիշները:
--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ишхцшр UПC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЧ-ЕЦХЦПQР-25/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			